46. ԶԱԶՈՆ ԻՆԱՆ ԱՍՍԱՐ

Կէլնի, կէլնի մեյ խատ թաքավոր: Էսա թաքավորին կէլնի իրեք խատ լաճ:

Ավուր մեկ էսա թաքավոր կկանչի ուր իրեք լաճերաց, կասի. - Այ պալամնե՛ր, ես պառվկեր իմ, վով կիտի ավատա որ էսօր, վաղ մեռնեմ, իմ մեռնելուց առաճ կուզիմ ծե մեկ նասյաթ տալ:

Թաքավորի տղեյներն ի, կասեն. - Թաքավո՛ր ապրած կենաս, ասա, ինչ որ կասես՝ մենք քյոն խապրիս չինք էլնե, քյոն նասյաթ ի՛նչ ի՝ կպախենք:

Թաքավորն ի, կասի. - Իմ նասյաթ էսա յի ծե, որ տուքյ չէլնեմ, չիմանամ որ էսա մեր սահմանիս էն դեխ՝ մեյ խատ ճոչ Միվտակ սարմ կա, չէլնի ընցնեքյ էնդեխ, էսա մեկ խապար տուքյ ծեր միտ պախեքյ, որ ես կմեռնեմ, մարթ ի, կմոռնաքյ, սորա կէրթաքյ էնտեղ ծեր գյլեոխ պալեմ չի գյա:

Էսասկընա մեյ ժամանակ կընցնի. ավուր մեկ էսա թաքավոր կմեռնի:

Էսա թաքավորի ճոչ լաճ մեկ օր կասի. - Ես պիտի մեյ խատ էրթամ էսա Միվտակ սարի էն մեկել իրես տիսնամ՝ խենքյ ի՞նչ կա: Տիսնամ խենքյ իմ խեր ինչի՞ էտասկընա ասաց մե. ջայնամ, ի՞նչ կէլնի թող էլնի:

Մեկ օր կկանչի ուր խալայեդին, կասի. - Իմ կարմիր ծին քյաշի թամքյի, որ ես ուրիշ տեղ պիտի էրթամ:

Ծին կպերեն, թաքավորի ճոչ լաճ կխեծնի, կկանչի ուր էն մեկել էրկու ախպերներաց, կասի. - Մեր խեր ըստյուց առաճ քյանի սաղ էր, մե ասաց որ՝ չէլնեմ, չիմանամ որ էսա Միվտակ սարիս էն մեկել դեխ ընցնեքյ, ծեր գյլեոխ սորա ողիյեմ կուգյա: Մկա ես պիտի էրթամ, ի՞նչ կէլնի թող էլնի: Խեմ էնտեղ ի՞նչ կա, վո՞վ ի էնտեղ, որ մենքյ չենքյ կանա ինոր վերեն:

Կասի, կխեծնի ծին, կինի ճամպախ կէրթա:

Կէրթա, կէրթա կխասնի էտա սարի տակ: Ծիյուց կէճնի էնտեղ,

ախպերի վերեն ճուր կխմի, գյնա կէլնի կխեծնի ուր ծին, կինի ճամպախ կէրթա: Կէրթա, կէրթա էրա սար կընցնի էն մեկել իրես, կտիսնա որ ի՞նչ. մեյ խատ ճոչ պախչեմ: Ըսկուն ճոչ ի, որ նա ոռ կերնա, նա ծեր: Պախչի մեչն էլ խազար մեյ տեսակ խավքյեր կան: Աշխրիս մեչ ինչ կանդար որ աստված պերքյ-պարին ի ըստեղծե, էտա պախչի մեչ կա: Պնխչի օրթալաղ տեղն էլ մեյ խատ ավուզմ կա, շատռավան օրթիս կթնլի, ճիւրն էլ անմախական ճուր ի:

Էսա լաճն ի, կուգյա որ կտիսնա էսա պար-պախչեքյ, էսա ծառեր, ծաղիկներ, տեսակ-տեսակ եմիշներ, սորա էտա անմախական ճուր, ինքյ ուր կասի. «Վալա, մեր խեր մե սառաճ խապե, որ մենքյ չիգյանք էսա խորոտ տեղրանքյ ֆռանքյ»: Կասի, ծիյուց կէճնի տակ, կէրթա էտա ախպրիս ճուր կխմի, ծին կկապի ծառին, ինքյն էլ կպառկի էնտեղ՝ ծառերաց խովի տակ, կքյնի:

Էսա լաճն ի, քյնուց կէլնի վեր, կուգյա վեր ախպրին որ պիտի լվացվի, պիրդան մեյ խատ էն դեխիս կայիմ քյամու տրվոցի ծեն կուգյա: Էրթալով էտա քյամին կշապանա, կուգյա կմոտրոխասնա, էսա լաճու մոտ գյոթ կդաստրի:

Էսա լաճ մեյ խատ ուր գյլեոխ կվերուցի վեր, կտիսնա որ մեյ խաստ խորոտ ախչիյմ խեծե վեր մեյ խատ խրեդեն ծիյում գյեռ իկե կայնե ուր սառաճ: Էսա լաճ որ կտիսնա էսա ախչկան, պիրդան կզախնխորի:

Էսա ախչիյն ի, կդառնա էսա լաճուն կասի. - Էյ խոդածին, - կասի, - տիւ վո՞վ ես որ էկեր ես էսա խոդ. խավքյն ուր պոռտով, օձն ուր թնով չէր կանե գյե, տիւ ի՞նչխ ես էկե:

Էսա լաճն ի, կշըշկոի, կասի. - Իմ խեր գիկ ասեր էր որ չէրթաս էսա Միվտակ սարիս էնդեխ չընցնես, համան ես իմ խոր նասյաթ չպախեցի, ասի. «Մեյ խատ էրթամ տիսնամ խենքյ էսա ի՞նչտեղ ի, որ իմ խեր ասաց մ'էրթա»: Էկա տեսա, որ շատ խորոտ, թաքավորի վայել տեղ ի: Քյիչմ նստա, ասի. էլնեմ մե կտոր ճիւր խմեմ, դառնամ էրթամ իմ երկիր:

Էսա ախչիյն ի, կասի. - Քյանի որ տիւ մենակ ֆռալու խամար ես իկե, քյե պան չեմ անե, դե էլի վեր, կնա՛, մեկ էլ էսա դարբրներ չերնաս:

Լաճն ի, կէլնի ուր ծին կխեծնի, փեոր-փեոշման կդառնա ետ կուգյա:

Էսա լաճն ի, որ կդառնա ետ կուգյա տուն, ուր ախպերներաց զմեն պան կպատմի, կդառնա ամր կանի որ ինչ կանդար որ ծիյավոր զորքյ կա՝ գյա որ էրթա էտա երկիր կռիվ, էտա խորոտ երկիր, պար-պախչեքյ առնի ուրենց խամար:

Էսա լաճն ի, կժողվի ինչ կանդար որ ծիյավոր ասքյար կա կառնի, կէրթա էտա տեղ: Կէրթան, կէրթան կխասնեն էտա ախչկան խոդի մեջ: Գյեռ ուրենց ասքյրներ կշարեն որ կռիվ բաշլայեն: Սեկ էլ կտիսնա որ էն թարաֆեն մեյ խատ մարթմ ծիյավոր՝ մեչ դուման, մեչ սար, մեչ քյար ֆըշալեն կուգյա:

Էսա ասքյրներ որ էսա քյամու ծեն, դուման կառնեն, բիթուն կես կդատրեն:

Էսա ախչիյն ի, ուր խրեղեն ծիյով կուգյա կտիսնա, որ սար-քյար բիթիւն ասքյար պոներ ի: Խետ կտիսնա էսա ախչիկ էսա ասքյրներ, կքյաշի ուր կոռ թուր էտա բիթիւն ասքյրներ կճարտի, թաքավորի ճոչ լաճն էլ խետ մենակ էրկու խատ կպախի, ինոնցն էլ մեկու քյիթ կկտրե, էն մեկելին էլ՝ ականջ, կդառնա կէօրեռխկի ետ, կասի. - Կնայե՛ք ծեր թաքավորին պատեով արեք:

Էսա էրկու ասքյրներ քյիթ-պենիիյտեր արնաթաթախ, փեռ-փեռշման կդառնան կուգյան, խապար կպերեն:

Թաքավորի ճոչ լաճու էն մեկել ախպերներ որ կտիսնա էսա էրկու ասքյրներաց, մեյ մեկելու կասեն. - Վայ, մեր խապրապերներ էկան, էն էլ ծրծղալով կուգյան, ըսկուն կէրնա, որ մեր ախպեր հաղթեր ի էտա թաքավորին, ինոր գորքեր բիթիւն ճարտեր ի, երկիրն էլ առեր ի:

Զատամանց որ կտիսնան էսա ասքյրներաց, թե որ քիթ ինան ականջներ կտրուկ ին, զատամանց ըսկուն կէրնա, որ իսոնքյ կծրծղան: Համա որ կմոտոխասնան, կտիսնան որ ի՞նչ. իսոնց քյիթ ինան ականջներ կտրուկ՝ գյեռ կուգյան ուրենց մոտ:

Իսրանքյ որ կմոտոխասնան, թաքավորի էրկու լաճեր կկանչեն իսոնց կասեն՝ ի՞նչխ էլավ:

Էսա ասքյրներ ինչ որ տեսեր են, ինչխ որ էլեր ի՝ բիթիւն մեյ-մեկ կպատմեն, կասեն. - Չուր թաքավորի տղեն էլ սպանեցին, մեր քյիթ ինան ականջներն էլ կտրեց, ասաց՝ կնայեք, ծեր թաքավորին պարեով արեք:

Օրթանջի ախպերն ի, որ կլսի էսա պան, ինչ կանդար որ ասքյար ունեն, կքյաշի կառնի կէրթա էսա ախչկան վերեն կովի:

Կառնի գյեռ ինչ որ ասքյար ունի կժողվի, կէլնի ուր սիվրակ ծին էլ կխեծնի, կինի ճամպախ: Խետ որ ասքյրներաց կէրթան, կէրթան չուր կխասնեն էտա սիվրակ սարով էն մեկել երես՝ էտա ախչկան խող: Որ կէրթան կխասնեն էտա տեղ, էսա օրթանջի ախպերն ի, բիթիւն ուր ասքյրներ կթափրցուցե սար-քյար, զմեն դարբար կպաշարի, կկայնի:

Կէսօր կէլնի գյեռ ասքյրներ ուրենց խացիկ կպռծնեն, գյեռ լսեր են, թե էսասկընա մեյ խատ թաքյ ախչիկմ կա, քյամու պես ֆըշալեն կուգյա, զմենին ուր կոռ թրով կճարտի, կդառնա կէրթա:

Էսա ասքյրներն ի, կէլնեն որ ուրենց տեղրանքյ էրթան, համա քյամու ծեն կբաշլայեն առնել: Կիրիշկան կտիսնան որ աղորթմանց զատամանց մեյ խատ ծիյավոր մեչ սար, մեչ քյար թերզ-դումանի մեչ կուգյա:

Էսա պան որ կտիսնան էսա ասքյրներ բիթիւն էլ կբաշլայեն տեռղալ, կես զաթի կյամքյի տենստեղ, իսկ էն մեկելներ զաթի պիպեռ կկտրեն:

Էսա ախչիյն ի, կուգյա կտիսնա որ զմեն սար-քյար էլմ'էլ ասքյրներ պոներ են: Համա ուր ծին կֆռայցուցի յոթ անգամ, կքյաշի ուր կոռ թուր, կինի մեչ էսա ասքյրներաց բիթիւնին էլ կճարտի, կթալի էնդեխ: Թաքավորու օրթանջի լաճուն էլ կսպանի, մենակ էրկու խուգյու կպախի:

Էն էրկու խուզյուն էլ կպիրի՝ մեկու էլմ'էլ քիթ կկտրի, էն մեկելուն էլ պոկներ կկտրի, ըսկուն որ ատամներ զմեն արարու պես կերևա, կդառնա կէօրեռխկի ետ՝ թաքավորու մոտ: Կասի. - Դե կնայեքյ ծեր թաքավորին պարեռվ արեքյ, ասեքյ Զազոն գյեռ ըսկընա կանի բիթնին էլ:

Էսա էրկու ասքյրներն ի, քիթ-մընոթներ բիթուն արնաթաթախ, վեռր-փեռշման կդառնան ետ, կուզյան ուրենց թաքավորին խապար պիրեն:

Թաքավորի պստիկ լաճն ի, գյեռ օր կխանի, օր կմտուցի, կասի, խենքյ ինչ խապար կէլնի ախպորս մոտեն: Հա կէլնի, կմտնի, կասի. բալքյի մեկմ էրևա: Համան կտիսնա որ զատամանց էրկու խոգյի ուրենց ասքյրի շորերով գյեռ կուզյան: Էսա լաճ խեռ կտիսնա էսա էրկու խոգյին, թե որ պոկներ ինան քյիթ կտրուկ ի, ըսկուն կէրևա ինոր կասես կծընդուն: Խեռ կտիսնա շատ կուրախնա, կդառնա ուր վազրներաց կասի. - Տիսեքյ, տիսեքյ, մեր խապրապերներ էկան, էկան համ էլ ծընդալով կուզյան:

Նազր-վազրներն ի, կթափեն տհուս կիրիշկան կտիսնան որ ադորթմանց գյեռ կուզյան, համ էլ ծընդալեն: Խեռ որ կմոտոխասնան էսա ասքյրներ, կտիսնան որ ի՞նչ. էլմ'էլ առաճվան պես քյիթեր կտրուկ ին, համան իսոնց ակնջի տեղ պոկներն ի կտրուկ: Գյեռ արնաթաթախ վերա գյլխներ կուզյան կկայնեն թաքավորի պստիկ լաճու առաճ:

Թաքավորի պստիկ լաճն ի, խեռ որ կտիսնա էսա ասքյրներաց հալ, կասի. - Է՜յ վախ, - կասի, - իմ օրթանջի ախպերն էլ կնայ:

Լաճն ի, կխառոյուցի էսա ասքյրներաց, կասի. - Ի՞նչխ էլավ կռիվ, ի՞նչխ չէլավ, իմ ախպեր ո՞րտեղ մնայ:

Գյեռ ըսկընա խապրներ կբաշլայի խառոյուցել էտա ուր ասքյրներաց:

Ասքյրներն ի, ինչ որ տեսեր են, գյեռ ըսկուն էլ զմեն էլած-չէլած կպատմին թե. - Քյո օրթանջի ախպերն էլ ըսպանեց, մեր քյթեր ինան պոկներն էլ կտրեց, դանոյավ ասայ. «Դե կնայեքյ, ծեր թաքավորն վո՞վ ի, ինոր պարեռվ արեքյ, ասեքյ, գյեռ Զազոն էսասկընա ախչիկ ի, վո՞վ ճակատ ունի՝ թող գյա ուր հալին տիրանա»:

Թաքավորու պստիկ լաճն ի, կասի. - Ծեզնից զատ էլ իսկի մարթ չազատվա՞վ:

Էսա ասքյրներն ի, կասեն. - Չէ, մեր էրկսից զատ մեյ խատ էլ չփոթան, - կասեն, - մե ել կապաներ, համան քյե խապար պերելու խամար չըսպանեց, մենակ մեր քյիթ ինան պոկներ կտրեց, էօրեռխկեց քյո մոտ խապրապեր:

Էսա թաքավորու պստիկ լաճն ի, որ էսա խապրներ կլսի, կկատղի, ուր ատմներ կզըգյզընգյայուցի, ուր ախպերներաց ավքյար առնելու խամար, կասի. - Ես էլ պիտի էրթամ տիսնամ՝ խենքյ էսա ի՞նչ ախչիկ ի, որ աշխար զարար ի կտրե ծեռ:

Նազր-վազրներն ի, կասեն. - Ջանը՛մ, ինչխ կէլնի տուն էլ էրթաս. էն մեկել ախպերներ կնայցին մեռան, սպանվան, տուն էլ էրթաս՝ վո՞վ կիտի ի՞նչխ պիտի էլնես, ի՞նչխ կէլնի, էլ մարթ չի մնա ըստեղ:

Թաքավորի պստիկ լաճն ի, կասի. - Չէ, իլաքյ որ բիլաքյ, կէրթամ: Կէրթամ, համ էլ առանց ասքյրի պիտի էրթամ, տիսնամ խենքյ էսա վո՞վ ի, որ մեյ խոզյով խազարներու դեմ կդնի, խազարներ կսպանի:

Նազր-վազրներ ինչ կանդար որ կանեն՝ ճար չէլնե խեստ էսա լաճուն: Կասի. - Կէրթամ, որ կէրթամ:

Կտիսնան որ ճար չկա, կասին. - Տու կիտես, ի՞նչխ կիտես՝ ըսկուն արա:

Էն մեկել օր թաքավորի պստիկ լաճն ի, ամր կանի որ ուր սև ծին խանեն, թամզյեն, որ ինքյ շոտ ճամպախ պիտի էլնի:

Էն մեկել օր թաքավորի խալայեղներ ծին ուր զմեն պանով հազր կպերեն, կկանցուցեն թաքավորի դռան առաճ:

Էսա լաճն ի, կխեծնի ուր սև ծին, կխայնի ուր խալվներ, կկապի ուր թուր, կայ պարեով կանի, կինի ճամպախ կէրթա:

Էսա լաճն ի, կէրթա. կէրթա կխասնի էտա ախչկան խոդ: Էտա Սիվտակ սարիս որ կընցնի էն մեկել իրես, կտիսնա որ ի՞նչ. կասես ուրիշ աշխարիս էլավ ինգավ առքյավութնի մեչ: Որ կտիսնա էտա դարբար բիթիուն ծառ-ծաղիկ, էտա եմշի խազար մեյ տեսակ ծառեր, անմահական ճրի ախպրներ, խազար մեյ գյեշիտ խավքյեր, կշըշկոի, կզարմանա, կդառնա ինքյ ուր կասի. «Էսա ի՞նչ խորոտ տեղ ի, ճիշտ որ թաքավորի վայել տեղ ի, իմ ճոչ ախպեր աղորթ որ առաճ էկավ, ասայ որ շատ խորոտ առքյավութնի տեղ ի, աժի որ էսա երկիր առնենքյ, ինչխ էլ որ լինի»:

Էսա լաճն ի, կմտնի էսա պախչի մեչ, ուր ծիյայ կէճնի տակ, ծին կկապի մեյ ծառիմ, ինքյ կէրթա կնստի ախպրի վերեն, ուր խանքյ կառնի, խայ, պան-ման կուտի, կպառկի էտա ավուզի կուշտ, թզի ծառի տակ, կքյնի:

Էսա լաճ կպառկի էտա տեղ, խորոտմ կքյնի: Ուր քյնու գյախ, որ ինք քյնած կէլնի, էսա ախչիկ էլմ'էլ կուգյա ուր պախչին աչկ տալու: Կխասնի քիչմ զատամանց, կտիսնա որ ուր խաս ավուզի մոտ, ծառի մեյ խատ կապուկ ծիմ կա, քիչմ էսա թարսաֆ, ուր այլամեշ էլնելու թզի ծառի տակն էլ մեյ խատ մարթմ պառկե գյեռ էնտեղ:

Էսա ախչիկն ի, կմոտոխասնա, կտիսնա որ աղորթ, մեյ խատ մարթմ գյեռ պառկե ուր թզի ծառի տակ քյնե, ծին էլ էն դեխ՝ ծառիմ կապուկ մնայե:

Էսա ախչիյն ի, որ կտիսնա էսա լաճուն, որ հեչ պեխապար, անվախի պես պառկե էտա տեղ, քյնե, ինք ու կասի. «Էսա լաճ անպատճառ կտրիճ տղա էլնելու յի, որ իմ գյալու գյախ իմ ֆշոցիս իսկի գյլեռխն էլ վեր չի վերուցե, համա առաճ էն ասքյրներ որ իկեր ին իմ վերեն կռիվ, իմ զարբիս գյեռ տենստեղ մանճ մեռեր ին, մկա էսա լաճ իսկի դարբըներ չէլնե»:

Էսս ախչիկ կտիսնա, որ էսա լաճ բաբագյիթ ի, քյնած տեղ պան չանե: Ինքյ ուր կասի. «Էտա բաբագյիթութեն չի որ քյնած տեղ

սպանեմ, իսանեմ վեր, նոր ինոր խեփ կովիմ, փիսնամ խենքյ ալաւ ինչի՞ խամար է իկե ըսփեղ»:

Ախչիկն ի, ուր ծիյով կուգյա կկայնի վեր էսա լաճու գյլխուն, կբաշլայի ծեն փալ: Կպոռա կասի. - Է՜յ խողածին, էլի վեր, փիսնամ խենքյ փու վո՞վ ես, ինչի՞ ես իկե էսփեղ:

Էսա թաքավորու պսփիկ լաճն ի, աչկեր ճմռթելեն կէլնի վեր, գյլեռխ կվերուցի, մեյ խապ կիրիշկա կփիսնա որ ի՞նչ. մեյ խապ խուռն-խրեղեն սախչիյմ վեր խրեղեն ծիյուն նսփե, կոռ թուրմ էլ կապե կողիս, կայնե վեր ուր գյլխուն:

Էսա լաճն ի, խեփ կփիսնա էսա ախչկան, կթոնի վեր, կխեծնի ուր ծին, կքյաշի ուր թուր, կկայնի: Կխասկնա, որ էսա յի Զաղոն, էսա յի որ ուր ախպերներաց ինաւ ուր ասքյրներաց սպանե, են երկու ասքյրներաց ակնջկներ ինաւ քյիթ կփրող էսա յի:

Էսա ախչիյն ի, կքյաշի ուր կոռ թուր, էսա լաճուն կասի. - Է՜յ խողածին, փու վո՞վ ես, ի՞նչ պան ունես էսա իմ խողի մեջ: Խավքյն ուր թեով, օձն ուր պոռփով չէր կանե գյե, փու ի՞նչխ էլիր ես, մենակ իկեր ես ըսփեղ, - էլմ'էլ կդառնա կասի, - թաքավորներ ուրենց խազար-խազարավոր ասքյրներով չկառցան, փու ի՞նչխ էկար:

Էսա լաճն ի, կասի. - Ես իկեր իմ իմ ախպերներաց ավքյար քյեզնից պիփի առնիմ:

Ախչիյն ի, մեյ խապ էսա լաճու վերեն կծղծղա, կդառնա ուր ծին կֆռացուցի, կքյաշի ուր կոռ թուր մեյ խապ կթալի դեխ էսա լաճուն: Խեփ որ էսա ախչիկ կթալի ուր թուր, էսա լաճն ի, ուր սև ծին կֆռացուցի, կընցնի էսա ախչկան իփև, ըսկուն որ թուր չի փեպնե իսկի էսա լաճուն:

Լաճն ի, մեյ խապ ուր սև ծին մեկել կֆռացուցի, կքյաշի ուր թուր, չի զանե ախչկան, առաճ կզանի էսա ախչկան ծիյուն, ըսկուն կզանի որ ծիյու չորս ոտ մեյդրաւ կկփրի, էսա ախչիկ կինի վեր քյիթ-պենին:

Լաճն ի, խեփ որ կփիսնա էսա ախչիկ ինգյավ վեր քյիթ-պենին, կմոտոխասնա որ վիզ կփրի, դիժաւր կուգյա, կփիսնա էսա ախչկան խորոտկութեն էլ, ծեռ չի էրթա որ ըսպանի:

Էսա ախչիյն ի, կփիսնա որ չէ, ինքյ պիփի հ'աղթվի, կդառնա դեխ էսա լաճ, աղաճանքյ կէնի, կասի. - Ես քյոն եմ, զիկ մի սպանե, ի՞նչ կուզես՝ արա, - կդառնա էլմ'էլ կասի, - ես չուր մկա, մեկ մարթուց ալա իսկի չի հ'աղթվե, համան էսօր ես քյեզնից հ'աղթվա, մկա ես քյոն եմ, շատ թաքավորներ զոռով-յոլով ուզեր ին զիկ ուրենց խամար, համան մեյն էլ չեն կառցե, էսօր մենակ փու կառցար, մկա ես քյոն եմ:

Էսա լաճն ի, որ կփիսնա էսա ախչկան խորոտկութեն, պիրդան ինչխ կէլնի, խելքյ կէրթա, կինի էրա փեղ:

Էսա ախչիյն ի, որ կփիսնա էսա լաճու խելքյ կնաւցե, ինգյե էնփեղ, կխանի ուր ծղծեր, կպոփի վեր էսա լաճու իրիսներաց, սորա համան կէլնի ինոր սև ծին կխեծնի, կփախի:

Էսա ախչիյն ի, որ կփախի, բիթուն սար-քյար իրար կառնեն, բիթուն ուրենց տեղեն կէլնեն, կինեն ուրիշ տեղ իսոր հերսիս: Փախնելու գյախն էլ պոռալեն կասի՝ «Փախեք, Ասմար կուգյա, Ասմար կուգյա»: Ինքյն էլ դումանի մեչեն ուր ծին կքշի կէրթա:

Զազոյի ճամխու վերեն իրեքյ դներ կէլնեն, իրեքյն էլ քյեոր ին: Էսա դներացն էլ ըմեն մեկին քյառսուն խատ տղա կէլնի, էտա քյառսուն տղեյներ Զազոյի փախնելու գյախ բիթուն էլ կնայեր ին սարեր պանջար քյաղել: Խեփ որ Զազոն պոռալով կէրթա, ինոր հերսիս էսա տղեյներ բիթուն էլ էտա սար-քյարերայ կինեն տակ, վուրուն թև կկոտրի, վուրուն ոտկեր, վուրուն էլ կողեր կսխկվի. վարհասլ ոչ մեյն էլ սաղ չեն մնա:

Էսա դնու տղեյներ քյոռ-թոփալ կէլնեն, կէրթան մոր զմեն կպատմեն, կասեն. - Զազոն կփախեր, ինոր հերսիս մենքյ բիթունս էլ քյարերայ կլորվանքյ էկանքյ տակ, մեր բիթունիս ծեռ-ոտ կոտրոռվավ: Զազոն փախնելու գյախ կպոռեր կասեր՝ «Փախեք, Ասմար էկավ, Ասմար էկավ»: Էտա Ասմար վո՞վ ի ասջեպա, որ էսա Զազոն ինորիս փախե: Ի՞նչ գյեշիտ կտրիճ մարթ ի, որ Զազոն ինորիս վախեցե փախե:

Էսա լաճն ի, քիչմ կմնա, խելքյ կուգյա վերեն, կէլնի վեր, կտիանա որ զատ չկա. նա ախչիկ կա, նա ուր ծին: Կէլնի կէրթա վեր ախպրին, կլվայվի, կկախի ուր թուր- ուր կոդիս, կէլնի կինի ճամպախ, կէրթա: Ինքյ ուր կասի. «Ես պիտի էրթամ, որտեղ որ ի էտա ախչկան պիտի կընդնեմ»:

Կէրթա, կէրթա կխասնի առճի տնու տուն: Կէրթա կկայնի ինոնց տռան վերեն, ականջ կանի, կտիսնա որ ներս խապար կուտան ուր ինան էսա ախչկան վերեն, կասեն որ Զազոն փախավ, իտվանց էլ կպոռեր կասեր, փախեքյ՝ Ասմար էկավ, Ասմար էկավ. մենքյ էլ ինոր հերսիս սարերայ ինգյանք տակ, մեր թանքյեր, ոտկներ բիթուն կոտրվավ:

Էսա տնն ի, կասի. - Ասջեպա էսա Ասմար վո՞վ ի, որ մեր Զազոն ինորիս փախե. ըսկուն կէրնա, որ էտա Ասմար շատ կտրիճ մարթ ի:

Էսա լաճն ի, խեփ կլսի էսա խապրներ, կտիսնա որ ուր վերեն ի խապար կուտան, տուտ կպանա, կմտնի ներս, կասի. - Պարեով ծե:

Էսա տնն ի, կասի. - Ատրծու պարին, խոդածին, - կասի, - խոդածին, խավքյն ուր թնով, օձն ուր պոռտով ըստեղ, էսա Զազոյի խոդ չէր կանե մտնի, տու ի՞նչխ ես ինկե:

Էսա լաճն ի, կասի. - Տուքյ ըստեղիս իսկի չտեսա՞քյ, մեյ խատ ախչիյմ ընցած վախտ, սև ծիյով:

Էսա տնն ի, կասի. - Տեսանքյ, ինչի՞ խամար կխառսուցես, - կասի. - Էն ախչիկ որ ընցավ, էսա խոդերայ տերն ի, աշխար ինոր վերեն չի կառսե, մենակ Ասմար անունով մեյ տղեմ ինոր հ'աղթե, էն էլ ինոր հերսիս որ փախավ, մեր տղեյներ բիթուն էսա սարերայ-քյարերայ վերվեն ինգյան տակ, կնայեր ին պանջար քյաղել: Վուրուն ոտ կոտրվավ, վուրուն ծեռ, վուրուն կոդ-կուշտ փշրվավ, բիթուն էլ գյեռ

էտասկնա̈ ա̈նգյալ իկեր ին ինգյեր ին տուն, վեր մեյ ծենի կպոռնան: Ձագոյի ընցնելու գյախն էլ պոռալով կասեր. փախեքյ, Ամար էկավ: Աջեպա էտա Ամար ի՞նչխ մարթ ի, որ մեր Ձագոն ինորից հ’աղթվե, վախեցե փախե:

Էսա լաճն ի, կասի. - Ամա̈ր որ կա, գյեռ ես իմ, տո̈ւ զիկ էն ասեքյ՝ ո՞ր դեխ կնայ էտա քյած:

Տեն ի, որ կտիսնա թե էսա յի Ամա̈ր, կէլնեն վեր կպիրեն, շատ պատիվ կանեն, կասեն. - Աղեկ, նստի քյիչ խանգյստացի, մենքյ քյե ինոր տեղ՝ որ կնայ, քյե նշանց կուտանքյ:

Լաճն ի, գյեռ կնստի, զաթի կայաթ անութի կէլնի, կնստի խաց-մաց կուտի, կխանգյստանա, կդառնա կասի. - Դե զիկ ճա̈նպա̈խ շանց տվեքյ, ես էրթա̈մ:

Տեն ի, կտիսնա որ Ամարն էսա յի, ախու խորոտ պատիվ կուտա: Սորա կդա̈ռնա էսա լաճուն կասի. - Է՜յ կտրիճ տղա, տո̈ւ զի կասես Ձագոյի ճա̈նպա̈խ շանց տո̈ւ, ես ինոր տեղ չեմ կիտե, ես քյե կէօրեռկեմ իմ օրթանջի քյուրոջ մոտ, էն կիտի, ինոր տեղ քյե շանց կուտա:

Էսա տսն ի, կասի. - Կէրթաս էսա դիմա̈ցի սարի էն մեկել իրես՝ իմ օրթանջի քյուրոջ տուն ի, կէրթա̈ս էնտեղ մեյ կիշեր կոնախ կէլնես, կդա̈ռնաս ինոր կխառցուցես, կխասկնաս տեղ դեոր ի, կէրթաս կկընդընիս:

Էսա Ամարն ի, կաց պարեով կանի էսա տեուն, կինի ճամպախ, կէրթա:

Կէրթա̈, կէրթա̈, կէրթա̈ կխասնի էտա սարի մոտ, կէլնի կընցնի էն մեկել իրես, կէրթա դողրի օրթանջի տնու տռան վերեն:

Լաճն ի, կէրթա̈ էսա տնու տռան վերեն ականջ կտնի, կասի՝ տիսնամ խենքյ ներս ի՞նչ կասեն. չէլնի՞ զիկ խապեց էն մեկել տն: Ականջ կանի, կտիսնա որ էսա օրթանջի տն առե ուր քյառսուն ա̈նգյալ-մա̈նգյալ, չոլախ, թնքյեր-ֆտկեր կոտռտված տղեյներ, վեր ուրենց դարտին կմռմռան. համդա էլ ինչ որ ընցե-դառցե՝ մեյ մեկելու կպատմեն, կասեն. - Ձա̈գոն փախնելու գյախ որ մենքյ ինոր հերսից սարերաց ինգյանքյ տակ, մեյ թարաֆեն կպոռար կասեր. «Փախեքյ, Ամար էկավ, փախեքյ, Ամա̈ր էկավ»: Աջեպա̈ մաշտենգյ էտա Ամար ի՞նչ տեսակ մարթ ի, որ մեր Ձագոն ինորից փախավ:

Էսա լաճն ի, դռան ճեղքյից կիրիշկա որ իսոնքյ բիթո̈ւն էլ ինգյեր են ուրենց յարալուխտերաց դարտ, համդա ել ուր վերեն ի խապար կուտան, համան տռւռ կպա̈նա̈, կասի. - Պա̈րև ծե, տնու ջնսեր:

Էսա օրթանջի տսն ի, կդառնա էսա լաճուն որ կտիսնա, կասի. - Աստծու պա̈րին, խողածին, տո̈ւ ի՞նչ պա̈ն ունես էստեղ, էսա Ձա̈գոյի խողի մեջ, որ խավքյն ուր թևով, օձն ուր պոռտով չէր կանե եսկծի:

Էսա լաճն ի, կասի. - Գյեռ էկա, աստված ըսկուն իպե, համան տու զիկ էսա ասեքյ, իսկի ախչիկ չեքյ տիսե՞ ըստեղից աև ծիյով ընցնելու գյախ:

Էսա օրթանջի տևն ի, կասի. - Խա՛, խողածին, ըստեղից ընցնող զաթի մեյ մարթ կէլնի, էն էլ Զաքոն ի: Մեյ պան էլ ասեմ. էսօր որ ընցավ Զաքոն, ըսկուն կփախեր, ըսկուն կփախեր, որ մեյ տղեյներ բիթուն սարից կլորվան տակ, ջան-ջասաթներ զմեն էլան ջարտ-փշուր: Համդա ել փախնելու գյախ կասեր. «Փախեքյ, Ասմար էկավ, Ասմար էկավ»: Չենքյ կիտե էտա Ասմար վո՞վ ի, որ ինոր հ'աղթե, էն էլ մեյ նաֆասով կփախեր:

Էսա լաճն ի, կասի. - Ասմար որ կա՝ ես եմ, .ես: Որտե՞ղ փախավ էտա քյած, զիկ ասեք:

Օրթանջի տևն ի, կտիսնա որ Ասմար էսա լաճն ի, ինոր ախուն կպերեն կնստյուցեն, շատ պատիվ կանեն, կասեն. - Նստի, կտրիճ տղա, էսօր խանգյստայիր, շատ ճամպախ ես իկե, չիր վաղ: Վաղ ես քյե կասիմ դեոր կնայ՝ նոր կէրթաս:

Լաճն ի, զաթի շատ ի նեղայե, կայթդան էլ անութի յի, կնստի խայ-մայ կուտի, էտ օր չիր լոս էտա տևու տուն կխանգյստանա, էն մեկել առատուն կէլնի վեր, կասի. - Դե՛ շոտ արեքյ, ես կէրթամ:

Օրթանջի տևն ի, կասի. - Է՞յ, կտրիճ տղա, ես կիտեմ՝ պիտի էրթաս Զնզոն կընդընես, համան ես ինոր որտեղ էլնել չեմ կիտե, ինոր ճամպախ էսա յանից ի, համան ես չիմ կիտե, իմ ճոչ քեոր կիտե: Ես քյե սալախ կուտամ, կէրթաս իմ ճոչ քյուրոջ մոտ, էն քյե կասի՝ դեոր ի:

Կասի. - Կէրթաս էսա ճամխու վերեն մեյ խատ գյետմ կուգյա ըռաստ, գյետի անուն էլ Պայվի յի, որ կէրթաս կխասնես էտա գյետին, գյետ շատ բեռշ ի, չես կանա ընցնե, կասես՝ պայվի, պայվելուտ մեռնեմ: Գյետ էն գյախ կպայվի, կընցնես էն մեկել իրես, կէրթաս մեյ խատ փոսմ կա, էտա փոսի մեչ իմ ճոչ քյուրոջ տուն ի: Կէրթաս էնտեղ ինոր կոնախ կէլնես, կասես՝ զիկ քյո օրթանջի քյեոր էօրեոխկեց: Պան ի, ավատա որ իմ ճոչ քյեոր մոռնա, քյե չասի, որ կէրթաս Զազոյին կկընդընես, ինոր մեյ խատ խրեղեն ծիմ կա, ինոր պոչից իրեքյ խատ առաճվեն մազ քյաշի, տիր ծոցտ պախի, քյե լազմ կուգյա, ինչ գյախ որ նեդ տեղ ինես՝ էն մազ տու կրակ, էտա ծին կխասնի, քյե զմեն բալից կազատի:

Լաճն ի, կայ պարեով կանի էսա օրթանջի տևուն, կէլնի կինի ճամպախ կէրթա:

Կէրթա, կէրթա կխասնի էտա Պայվի գյետին: Որ կխասնի գյետի քյանար, կասի՝ Պայվի, պայվելուտ մեռնեմ: Աղորթմանց գյետ կպայվի, ճրեր կէրթան էն յան, էն յան կէլնի չոր ճամպախ, էսա լաճ կընցնի էն մեկել իրես: Որ կընցնի էն մեկել իրես, ճրեր էլմ'էլ կուգյան կառնեն իրար:

Լաճն ի, գյետից կընցնի էն մեկել դեխ, կէրթա, կէրթա կխասնի էտա սալախ տված ծոր: Կտիսնա որ աղորթմանց, էնտեղ գյեռ մեյ խատ տունմ կա: Կէրթա կկայնի գյախտիկ վեր էտա տռան, ականջ կանի,

կասի. տիսնամ խենքյ ներս ի՞նչ խապար կուտան: Կտիսնա, որ էսա ճոչ տնու տուն էլ էն ախչկան ինան ուր բասն ի կանին իսոնքյն էլ: Էսս տն առե ուր քյառսուն յարալու տղեյներ, նստե ինոնց դուրտն ի, կանի: Կդառնա կասի. - Ամեպա մաշտենգյ էտա Ասմար ասած ինչ գյեշիտ մարթ ի, որ մեր Զաղոն ինոր ախուն թողե փախե:

Էսա լաճն ի, որ կտիսնա ուր վերեն ի, խապար կուտան, համան յավաշմ տուտ կպանա, կմտնի ներս, կասի. - Պարև ծե, տնու ջնսեր:

Ճոչ տնն ի, կասի. - Աստծու պարին, խողածին, - կասի, - տու ի՞նչ պան ունես էսա խողի մեչ: Օձն ուր պոռտով, խավքյն ուր թնով չէր կանե ընցնի ըստեղ, տու ի՞նչխ ես իկե, - կասի, կդառնա կասի, - դե շոտ, ժողվի փեշերտ, էլի կնա էսա խողիս, թե չէ Զաղոն իմսսով, քյո ճոչ կտոր ականջ կթողնի:

Էսա լաճն ի, կասի. - Է՜յ տնու ջնսեր, էն գյեռ ես իմ, ես Ասմարն իմ, Ասմար: Վո՞վ կանա իմ ճամպախ կտրե, տու գիկ էն ասեքյ, ո՞ր ճամխիս կնայ էտա քյած, գիկ պիտի ասեքյ:

Էսա ճոչ տնն ի, որ կտիսնա թե Ասմարն ի, ինոր ախուն կառնի, կպիրի կտնի վերին գյլոխ, շապ պատիվ-պան կանի: Սորա կդառնա էսա լաճուն կասի. - Քյե վո՞վ էորեռխկեց մո գիկ:

Լաճ կասի. - Քյո օրթանջի քյեորն ասայ: Ես առաճ կնայի ինոր մոտ, գիկ ասայ. «Ես չիմ կիտի, կնա իմ ճոչ քյուրոջ մոտ, էն կասի թե տեռ ի Զաղոն, էն քյե ճամպախ շանց կուտա»: Ես էլ էլեր եմ, տողրի իկեր եմ քյո մոտ, որ գիկ ինոր տուն շանց տաս:

Էսա տնն ի, կասի. - Աղեկ, կտրիճ տղա: Քիչմ նստի, խանգյստայի, խայ-պան կուտես, կիշերն էլ կմնաս, նոր վաղն առատուն կէլնինքյ վեր, ես քյե շանց կուտամ, կերթաս կկընդրնես:

Լաճն ի, կայաթ անութի կէլնի, համտա ել նեղայե: Կնստի, խայ-մայ կուտի, էն մեկել օր առատմե կէլնի վեր, ճոչ տնուն կասի. - Դեռ՞ր ի, գիկ ասա, ես անգյնցեր իմ, կերթամ, էլ չեմ աչկե:

Տնն ի, կասի. - Քյանի որ տու էն մարթն իս, էն կտրիճ լաճ որ մեր Զաղոյին հ'աղթեր ես, ես չեմ խնայե ինոր տեղ, ես քյե կասեմ դեոր ի, մենայ թե իմ ասած խապրներ բիթիուն էլ միտտ պախես, անես: Չէլնի թե չանես, սորա կզարարվես:

Լաճն ի, կասի. - Չէ, ինչ որ կասես, ընկուն էլ կանեմ:

Տնն ի, կասի. - Որ ընկուն ի, ես քյե կասեմ ինչ արա, - կասի, - որ ըստեղիս կէլնես տուս, կինես ճամպախ կերթաս, քյե ճոչ սարիմ մոտ ճամպախմ ըռաստ կուգյա, էտա ճամպախ շատ նեղ ի, կընցնես կերթաս. էտա ճամխի գյլեռխ մեյ խատ ճոչ առյուծմ նստեր ի, մարթ չի թողնե որ ընցնի դառնա, երթա գյա: Որ կխասնես իտոր մոտ, էն կփընչա, կուգի գյա դեխ քյե, որ քյե ճարտի: Էն գյախ տու կասես՝ ճամպախ տու, Ասմար կընցնի: Ինոր ախուն կէլնի կկայնի վեր էրկու ոտաս, սալամ կպոնի, տու կընցընես, էլ քյե պան չանե: Սորա կերթաս, կերթաս մեյ խատ Սև սարմ ըռաստ կուգյա, էտա սարի էն մեկել իրես

մեյ խափ խաս պախչեմ կա, էփա պախչի էն մեկել գյլեոխն էլ զաթի Ձագոյի քյեռշկ-սարեն ի, որ էրթաս կփիսնաս: Որ կէրթաս որ պիփի մփնես մեչ էփա պախչին, որ ընցնես էրթաս դեխ փուն, պախչի փռան առաճ քյառսուն խափ հյուրի-փարիքյ նսփեր ին, բիթիւնի ծեռնւսյ էլ գյամանչա յի: Ձագոն ինոնց թամխեր ի. «Խեփ որ մարթ կուգյա, զիկ ծեն փալու խամար ծեր սազեր զարկեքյ, որ ես էլնեմ վեր»: Տհւ որ կմփնես էփա պախչից ներս, ինոնքյ քյե կասեն՝ ի՞նչ կուզես որ զանենքյ: Տուն էլ կասես. ես կուզիմ Ամմարի յար գյեռվաքյ: Խեփ փու Ամմարի անուն փաս, ինոնքյ զաթի վեր Ամմարի խաղ են խանե, էլ ախու չեն զանե, քյե ճամպախ կուփան, փու կընցնես կէրթաս: Կէրթաս, պախչլի էն մեկել գյլեոխ զաթի Ձագոյի քյեռշկ-սարեն ի: Տել ներս չիս մփնե քյո աչ թևի վերեն մեյ խափ փագյախ կա, կէրթաս էփա փայխի փուռ կպանաս, կփիսնաս որ էնփեղ մեյ խափ խրեղեն ծիմ կա, կառյկես էփա ծին, կփանես կապես ծախ յանի փագյախ, սորա կէրթաս կմփնես էփա քյեռշկ-սարեն: Քյառսուն մափ կպանցրանաս, կէլնես վեր, կէրթաս քյառսուն խափ էօդա կա՝ զմեն կպանաս կաչկես, կփիսնաս խենքյ դեռ՞ր ի Ձագոն: Որփեղ որ կէլնի, մի վախենա, էն քյնած կէլնի չուր քյառսուն օր, քյառսուն օրից սորա կէլնի վեր: Գյեռ կէրթաս կկընդնես, էն գյախ փու կիփես՝ ի՞նչ կանես արա: Կուզես ըսպանի, կուզես թող, մենակ թե՝ ես քյեզնից ըռըզա կանեմ որ ինոր չասես, թե ուր փեղ վով ասաց:

Լաճն ի, էսա զմեն պաներ կլսի, շնորհակալ կէլնի էսա փեույ, կայց պարև կանի, կէլնի կինի ճամպախ կէրթա:

Շափ կէրթա̈, քիչ կէրթա̈, կէրթա̈ վարիասլ կխասնի էն նեղ ճամխի գյլեոխ, որփեղ էփա առյուծ նսփեր ի, մարթ չի թողնի որ ընցնի:

Էսա լաճ խեփ կմոփռխասնա իսոր, էսա առյուծ կբաշլայի մըռալ: Խեփ որ կմըռա, էսա լաճ կասի. - Ճամպախ փուր, Ամմարն ի կընցըշնի:

Խեփ որ կասի Ամմարն ի, կընցըշնի՝ առյուծ կէլնի, կկայնի վեր ուր էրկու թաթ վերայ, սալամ կպռնի, ճամպախ կուփա, որ ընցնի էսա լաճ:

Լաճ կընցնի էփա փեղեն, կէրթա̈, կէրթա̈ կխասնի էն փևու ասած Սև սարին: Կէրթա կխասնի էփա սարի մոփ, էնփեղ ախպյուրմ կէլնի, կնսփի ճուրմ կխմի, ուր խանքյ կառնի, կէլնի սար կսռճվի էն մեկել իրես: Որ կսռճվի էն մեկել իրես, կփիսնա որ ի՞նչ. մեյ խափ խորոփ խաս պախչեմ գյեռ ուր առա̈ճ: Կէրթա̈ որ պիփի մփնի, կփիսնա որ էփա խաս պա̈խչի փռան առա̈ճ քյառսուն խափ հյուրի-փարիքյ նսփեր ին, գյամանիքյ ծեռքյներ: Խեփ որ կփիսնան էսա լաճուն, կասեն. - Ի՞նչ կուզես, որ քյե խամար զանենքյ:

Լաճն ի, կասի. - Ես կուզիմ որ Ամմարի յար գյեռվաքյ:

Խեփ որ կասի Ամմարի յար գյեռվայեքյ, էսա հյուրի-փարիքյ կճանչնան որ էսա յի Ամմար, կէլնին վեր, ճամպախ կուփան ախու իսոր որ ընցնի:

Լաճն ի, էփա փեղից էլ կընցնի, կէրթա̈ խաս պախչի էն մեկել

գյլեռխ: Կտիսնա որ մեյ խատ սիվտակ քյեռշկ-սարեմ կա էնտեղ: Կէրթա էտա տնու ասածի պես առաճ աչ յանի փագյխի տուտ կպանա, կտիսնա որ մեյ խատ խրեղեն ծիմ գյեռ դա կապուկ՝ ի: Կառցըկի, կառնի կէրթա էն մեկել յան, ծախ դեխի փագյախ կկապի, պռչից էլ իրեքյ-չորս խատ մազ կքյաշի, կդնի ծոց, կէրթա կմտնի քյեռշկ-սարեն: Կմտնի ներս, կէլնի էտա քյառսուն մատ թարանջեն, կէրթա ինչ կանդար որ էօդա կա՝ բիթիւնի տոներն էլ կպանա, կտիսնա որ քյառսուն նեռմարա էօդի մեչ Զազոն պառկե քյնե: Խետ կտիսնա Զազոյին, թուր կքյաշի, կկայնի վեր գյլխուն, կդառնա ծեն կուտա:

Զազոն ի, մեյ խատ կծըմրկտա, աչկեր կպանա, կտիսնա որ ի՞նչ. Ասմար գյեռ ուր թուր քյաշե, կայնե վեր ուր գյլխուն: Խետ որ կտիսնա, էլ ի՞նչ կանա անե, համան կուգյա վեր ծնգյան, կուգյա Ասմարի առաճ աղաճանքյ կէնի, կասի. - Ես քյոն իմ, ի՞նչ կանես արա, կուզես սպանի, կուզես թող:

Էսա լաճն ի, մեյ դեհեն ուր գութ կշարժի, չուզի սպանի. մեյ դեհեն էլ կտիսնա իսոր խորոտկութեն՝ ծեռ չէրթա, որ զայ անի: Կդառնա կասի ախչկան՝ գիկ կառնե՞ս:

Ախչիյն ի, ի՞նչ կանա ասի, չար-նաչար կասի. - Խա, կառնեմ, - կասի, - ես որ քյե պես կըտրճի չառնե՞մ, ապա վի՞ր առնեմ:

Էտա տեղ գյեռ ուրենց մատնկներ կփոխին, մեյ մեկելու կսիրեն կառնեն, կպսայվեն: Էսա լաճն ի, որ Զազոյին կառնի, էլ չէրթա ուր երկիր, կմնա ըստեղ, ուր աշխատ կմոռնա բիս-բիթիւն:

Իսոնքյ գյեռ ըսկնա կապրին:

Էսա լաճու արհեստ կէլնի ավչութեն: Զմեն օր կէրթա ավչութեն, իրիկվնից կուգյա տուն, գյախմ խավքյ կպիրի, գյախմ ջանավար:

Էսա լաճն էլ ըսկուն կուզի ուր կընգյան, որ ավչութեն էրթացած գյախ, ուր կընգյան ալնախ կտանի խետ ուր: Ճանմպախ որտեղ որ խասնի, էտա ալնախ կխանի կպագյի, կտնի ջեռպ: Էտա ալնախ ըսկուն խորոտ ալնախ ի, որ մենակ Զազոյի մոտ կա: Ինքյն էլ զաթի զմեն գյախ կասեր. «Վով որ իմ ալնախ առնի, ես ինոր կէլնեմ»: Էտա ալնախ ուր սիրու ալնախն էր:

Ավուր մեկ էսա լաճ ավչութեն կնալու գյախ ինչխ կէլնի, էտա ալնախ կուրիսցուցի: Քամին կառնի, կէրթա կթալի ծով, ծովու տընտեռոներ կառնին էսա ալնախ, կտանին կթալեն ծովու էն մեկել ափ, ուրիշ թաքավորի խող: Կկընդրնեն էտա ալնախ, կառնեն կէրթան, կտանեն կուտան ուրենց թաքավորին, կասեն. «Էսա ալնախ ծովու ափ կընտանքյ»:

Էսա թաքավորն ի, խետ կառնի էսա ալնախ, կտիսնա որ Զազոյի ալնախն ի:

Էսա էն թաքավորն ի, որ քյանի անգամ խապար ի էօրեռխկե Զազոյին թե՝ ես քյե կառնիմ, համան Զազոն խոսկ չի տվե:

Էսա թաքավոր զոռով ուզե տանել էլմ'էլ չի կառցե, ուր ասքյրներ բիթիւն ճարտել տվե, ետ ի դառցե:

Խեպ որ էսա ալնախ կտիսնա, կասի. «Կա չկա Զազոն իմ վերեն սիրահարվե, էլ մարթ չի կընդե որ խապար էորեռխկի, էլե ուր ալնախ թալե ծով, որ ճուր պիրի մոտ զիկ»:

Իսոր վերեն թաքավոր ամր կանի, կասի. «Վով կանա էրթա Զազոն պիրի, ինոր ուր քյաշով ոսկի կուտամ»:

Մեյ խատ պառավմ կուգյա, կասի. - Ես կանամ պիրե, թաքավոր ապրած կենաս, զիկ ամր ար, էրթամ պիրիմ:

Թաքավորն ի, կասի. - Դե կնա՛ համան քյե չուր քյառսուն օր օր կուտամ, թե որ պիրիր՝ զաթի քյո քյաշով ոսկին կառնես, թե որ տառդակ էկար՝ վիզտ պիտի զանեմ:

Էն մեկել օր էսա պառավ կէլնի մեյ խատ ծընծիմմ կկընդնի, կպիրի կթալի վեր ծովուն, կխեծնի կուգյա էսա մեկել երես, որ Զազոյի խողն ի, կէլնի տուս: Որ կէլնի տիս, ծընծիմ կխորի մեչ ավզներաց, ինքյն էլ կնստի քիչմ էնդեխ, բաշլայի լալ:

Ավուր մեկ ի՞նչխ կէլնի էսա Ասմար կուգյա էսա ծովու յան ավչութեն անել: Կուգյա կտիսնա որ մեյ խատ պառավմ նստե ծովու ափ կուլա: Կխառցուցի կասի. - Պառա՛վ, ի՞նչ էլե քյե, որ կուլաս:

Էսա պառավն ի, կասի. - Ի՞նչ ասեմ, քյե մեռնիմ, իմ ինգյրներաց խեպ էկանքյ էսա ծովու ափ, ասինքյ քիչմ փանչա ժողվենքյ, զիկ թողին ըստեղ անտեր-անտիրական, թողին կնացին: Ես էլ չիմ կիտե, որտեղ էրթամ, գյեռ ըսկընա շշկոմեր իմ մնացեր իմ, ի՞նչխ անեմ՝ չեմ կիտե:

Ասմարն ի, կտիսնա որ խեղճ պառավ մենակ պիտի մնա էնտեղ, սիրտ կցավա վերեն, կասի. - Պառավ, էլի խեծի ծիյուս թարքյ, քյե տանեմ մոտ զիկ, ես զաթի մարթ չունիմ տան, ծերեկնեց կաց մոտ իմ կնիկ, թե որ կուզիս:

Պառավն ի, զաթի չէ՞ր ուզե էտասկընա պա, ուր խաս թարաֆեն ի:

Ասմարն ի, որ պիտի առնի թարքյ էտա պառվուն, ի՞նչխ կանի՝ ծին չառնե թարքյ: Ի՞նչխ որ կանի՝ ճար չէլնե: Պարտավորված պառվուն կասի. - Պառա՛վ, ես յավաշ-յավաշ կէրթամ, ինգյի իմ իտե արե:

Պառավն ի, կէրթա յավաշ-յավաշ չուր կխասնեն տուն:

Ասմարն ի, Զազոյին կասի. - Կնացի տեսա ծովու ափ էսա պառավ կընիկ ուր ինգյրներաց կուրիսեր էր, նստեր էր կուլեր: Միրտս ցավաց վերեվն, ասի՝ առնեմ տանեմ տուն, քանի որ մենքյ էլ խալայեղ-պան չունենքյ տան, համ թող խըզմաթ անի, համդա ել քյե սըպրի ինգյեր կէլնի:

Զազոն ի, կասի. - Աղեկ չարիր, պիրիր: Մկա քանի որ պիրեր ես, էլ ի՞նչ անեմ, պիրեր ես, պիրեր ես:

Մեյ տաս-տրսընխինգյ օր կընցնի, էսա պառավ որ կդառնա տընընինկի պես, մեկ օր Զազոյին կասի. - Խարսա, ախր ես չեմ կիտի տիս ի՞նչխ մարթ կընիկ եք:

Զազոն ի, կասի. - Ի՞նչի, ի՞նչ կա որ:

Պառավն ի, կասի. - Էսքան ժամանակ տիս՝ պսայվեր եքյ, տու ալա չուր էսօր չես կիտե քյո մարթու վոժ ի՞նչ պանիս ի:

Զազոն ի, կասի. - Ի՞նչ անեմ խասկընամ:

Պառավն ի, կասի. - Ի՞նչխ թե, ի՞նչ անեմ: Մեյ կնիկ ի՞նչխ կէլնի որ ուր մարթու ահվալ չխասկնա, մախ-մեռ իսանին ի:

Զազոն ի, էսա պառվու ասածին կխավատա, կասի. - Աղորթ, ես ի՞նչի իսկի չեմ խառոյուցե իմ մարթուն թե՝ քյո վոժ ո՞ր տեղից ի: Կայնի, իրիկուն ես պիտի խառոյուցիմ խասկնամ, աղեկ էսկեցիր միտս:

Իրիկուն ի, որ Ասմար ավչութնից կդառնա, խաց կուտեն կպոծնեն, կդառնա ուր մարթուն կասի. - Աղորթ, Ասմար, մենքյ էս կանդար ժամանակ մեյ մեկելու խետ կապրինքյ, մեչ մե իսկի պիտի գյախտիկ պան չէլնի:

Ասմարն ի, կասի. - Զազո, ի՞նչ գյախտիկ պան կա, որ ես քյե չիմ ասե:

Ախչիյն ի, կասի. - Էսականդար օր մենքյ մեյ մեկելու մոտ ինքյ, ես ալա չեմ կիտե, թե քյո վոժ ի՞նչ պանի մեչ ի:

Լաճն ի, կասի. - Զազո՛, ի՞նչ անես կխառոյուցես, ո՞ր տեղից որ ի՝ թող էլնի, տիս ինչի՞ էսականդար կհետաքրքրվես:

Լաճ կիմնա որ էսա բիթիհն արածներ էսա պառվու շինած պաներն ի որ իտրով խասկնա, էրթա ուր արածն անի:

Ախչիյն ի, կասի. - Չէ՛, իլաքյ-պիլաքյ պիտի ասես: Մեր մեչ ի՞նչ որ էլնի՝ իսկի գյախտիկ պան պիտի չէլնի: Ի՞նչ էլե պիտի ասես, ինչի՞ մեչ ի՝ պիտի ասես:

Էսա լաճն ի, կտիսնա որ ճար չկա, չարնաչար, էտա պառավուն էլ խապելու խամար, ծընծղալու խամար կասի. - Ի՞նչ անեմ, քյանի որ էտասկնա շատ կուզես իմնալ, քյեզնից ի՞նչ պախիմ, իմ վոժ, էսա ավել կտիսնաքյ, - կասի, - տան տախտի ավել, էտա ավելն ի իմ վոժ: Խետ էտա ավել վառեն կամ կոտրին, ես վոժից կինեմ: Վարհասլ էսա յի իմ վոժ:

Էսա պառավ որ կլսի էսա պան, ինքյ ուր կասի. «Վալա, իմ պան էլավ»:

Առատուն կէլնի վեր մութ-լոս, կէրթա տուն, թոներ կվառի, տախտ կավիլի: Ավիլելու գյախ որ կուգյա կխասնի թորման մոտ, ավել բիրդան կլոզայուցի թոներ: Կդառնա ծեռ կզանի վեր ծընգյան, կասի. «Գյա խոգյիս էլներ, սև կապեմ, ծեռքյերս ինչի՞ էր թուլյե որ ավել փոթավ ինգյավ թոներ»:

Պառավն ի, գյեռ կիտի որ ինքյ էտա ավել իթալ թոներ՝ Ասմարի վոժ զաթի կնայ: Կաչկի մեյ քյանիմ օր, էսա պառավ կտիսնա որ չէ՝ էսա լաճ ուրենց խապեր ի: Կէլնի մեկ օր էլ կկպնի էսա ախչկան, կասի. - Ես չիմ կիտե ախր տիւքյ ի՞նչ տեսակ իրիկ-կնիկ եքյ: Ես մեկ օր չիմ տեսե որ տու էլնես տիւս, մեյ խատ ֆոաս, տարին տրսվերկու ամիս հա էսա չորս պատի մեչ փայվեր ես մնայեր ես: Ընկուն կերնա որ տու քյո մարթուց յա կամչնաս, յա չէ՝ կվախենաս: Օր մեկ օր չես ասե՝ գյա մարթ, ես էսօր կէրթամ էսա դարբար ֆոալ: Քյո տունը շեն, մեյ խատ

իգին առ, էլի տհւս, տես աշխար ի՞նչ կա, ի՞նչ չկա: Հա ինչ չւնքյ ծմռվան դավրի մնայեր ես տուն, խամ մնայեր ես, էսա իրիկուն էլ որ կուզես աղիս իգին առ, վաղ կէլնենքյ էսա դարըրներ, խորուտ տեղրանքյ կա՝ կէրթանքյ ֆռալ:

Ախչիյն ի, մեյ խատ կմտածի վեր ուր, կասի. «Աղորթ կասի էսա կնիկ, ի՞նչ հա տարին տըսվերկու ամիս փակվեր եմ էսա տան մեչ մնայեր իմ, իսկի չեմ էլնե տուս մեյ խատ ման գյալ: Էսա իրիկուն որ Ասմար գյա տուն, պիտի ասեմ որ ես վաղ կէրթամ ֆռալ»:

Իրիկուն ի, որ Ասմար կուգյա տուն, խայ-պան կուտեն կպռծնեն, էսա ախչիկն ի, կասի. - Ասմա՛ր, ես վաղ կէրթամ ման գյալ, չէլնի որ զիկ տուն գյաս աչկես, իգին կուտա՞ս:

Ասմարն ի, կասի. - Կնա, չանգ որ կուզիս, ես ի՞նչխ անեմ:

Վարիասլ չուզե որ ուր կնգյան խաթր կոտրի:

Պառավ որ էսա պան կլսի, ուրախութնե վեր-վեր կթռնի:

Առատուն որ կէլնեն վեր, զաթի Ասմար կթողնի կէրթա ավչութեն, կմնան էսա պառավն ինան էսա ախչիկ: Կէլնեն խայ-պան, քիչմ պերքյ-պա̈րի կկապեն, կխայնեն ուրենց տըրյուց շորեր, կէլնեն տուս ֆռալ: Կէրթան, կէրթան էսա պառավ ըսկուն կանի, կիամոզի էսա ախչկան որ կէրթան ծովի ափեր ֆռալ: Կխասնեն ճիշտ էնտեղ, որ պառավ էտա ծըծհւմ պախեր ի մեչ ավզին: Խետ կխասնեն էտա տեղ, պառավ կվերույի կասի. - Քանի որ էկանքյ ըստեղ բարեմ արե լոխկընանքյ, նոր էրթանքյ տուն: Իկեր ենք՝ խասեր ինքյ ըստեղ, առանց լոխկընալ էրթանք, պիտի ասեն կնային ծով, տառտակ էկան:

Ախչիյն ի, միամիտ կէլնի, կիամոզվի էսա պառվու ասածներին: Կխւանին խալվներ, որ լոխկնան: Խետ որ խալվներ կխանի էսա ախչիկ, էսա պւառավ կատւատորի համան կպռնի էսա ախչկան, ծըծումն էլ ավազի մեչեն կխանի, էսա ախչկան կկոխի մեչ, պերան կկոծի, կթա̈լի վեր ծովուն, ինքյն էլ կէլնի կխեծնի վերեն, կինի ծովու վերեն կէրթա̈ դեխ ուր աշխար, որ էտա ախչիկ տանի թաքավորին, զաթի խինգյ օր ի մնայե որ ուր վողտեն թըմըմի:

Էսա պառավն ի, կէրթա, կէրթա ծովուց կէլնի տուս, կխասնի ուր երկիր սաղ-սա̈լա̈մաթ: Խետ որ կխասնի ուրենց երկիր, էտա ծըծհւմ առանց պա̈նա̈լու կառնի կէրթա̈ տողրի թաքավորի սարեն: Որ կխասնի թաքավորի սարեն, խա̈պար կտանեն թաքավորին, թե՝ պառավ Զա̈գոն պերեց:

Թաքավոր խետ կլսի, կպերի ծըծում կպանա, կտիսնա որ աղորթմանց՝ Զա̈գոն ի, ա̈մր կանի, որ էտա պառվուն ուր քյաշի գյեռրա̈ ոսկի տան, ճամխեն:

Էսա ախչիկ որ լոս աշխար կուգյա, կտիսնա որ ինքյ ուրիշ տեղ ի, ըսկուն կէլնի, որ խելքյ կէրթա̈:

Թաքավոր ա̈մր կանի, որ ինչ կանդար որ ուր քյաղաքյ ժաղամաթ կա, պիտի ուրենց թե կուժ էլնի, թե փա̈ռչ՝ առնին էրթան ա̈խպրից ճուր

պերեն, լյեն վեր էսա ախչըկան, որ խելքյ գյա վերեն: Քյանի որ կլյեն, տել խելքյ չի կե վերեն, էլմ'էլ խելքյ կէրթա: Վարհասլ էտա ախչիկ պերեր ին էտա տեղ, չեն պիրե՝ հա խելքյ կէրթա, մեյ մյուքյում ճար չէլնե: Քյաղքյի ժաղամաթն էլ թաքավորի ամրն ի, որ կասի թե՝ կնայեք ծե թալեք ծով՝ չեն խնայե, տեոր մնայ որ թաքավորի խարսի խամար ճիւր խնային , ճիւր չպերեն: Էտա քյաղքյի մեչն էլ գյեռ էտա մեկ ախպյուրն ի, որ կա:

Թաքավորն ի, կտիսնա, որ ճար չկա, Զազոյի վերեն խելքյ չի գյա, ամր կանի կասի, քյաղքյի մեչ ինչ կանդար որ պառավ կա՝ ինոնքյ պիտի գյան մոտ էսա ախչիկ, պալքյի համոզեն: Թե չէ ուրիշ մարթու, ջահելի հրաման չի տա որ էրթան մոտ:

Ինչկանդար որ էտա քյաղքյի մեչ պառավ կա՝ կթափեն կուգյան, որ Զազոյին համոզեն՝ թաքավորի խետ պսայվի պալքյի:

Ինչ որ կանին՝ ճար-մյուքյում չէլնի, չեն կանա էսա ախչկան համոզե:

Թաքավորն ի, կտիսնա որ ճար չկա, ինքյ կուգյա մոտ Զազոն, կասի. - Զազո՛, ես էսականդար տարի վառվա քյե խամար, մկա զեորեով էկար ինգյար իմ ծեռ: Էսօրն էլ կանեմ, չեմ անե՝ չիմ կանա քյե համոզե որ պսայվենքյ պըոծնենքյ: Տիւ կիտես՝ տու էլ իմ ճանգյիս չես կանա ազատվե: Ես քյե կասեմ խաթրով էլնի, թե չէ զոռով ինչ էլնի՝ կանամ ես իմ արած անե: Քյե չուր իրեքյ օր՝ օր, թե խաթրով պաայվար՝ պսայվար, թե որ չէ՝ իրեք օրիս սորա քյե զոռովեն էլե կքյաշեմ իմ էօդեն, իմ ուզած կանիմ:

Կասի թաքավոր, կէլնի տուս:

Զազոն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, գիկ իրեքյ օր քիչ ի, տըսընխինգյ օր մյույտաթ տուր, չիւր տըսընխինգյ օր որ չպայվա, նոր ինչ կիտես՝ ըսկուն արա:

Զազոն ի, կմտածի կասի. «Թե որ չիւր տըսընխինգյ օր իմ Ասմար էկավ գիկ կընտավ՝ զաթի կընտավ, թե որ չէ՝ տըսընխինգյ օրիս սորա էլ զոռ կանա զիկ կընտրընե: Որ չկառցավ կընդրներ, զաթի ուրիշ ճար էլ չմնա, պիտի թաքավորի խապարն անեմ»:

Թաքավորն ի, որ կլսի Զազոյի խապրներ, կասի. - Աղեկ, թող քյո խապարն էլնի, քյե չուր տըսընխինգյ օր՝ օր:

Զաթի քյաղաքյ ինչկանդար որ ժաղամաթ կա՝ բիթիւն էլ էսա ութ-տաս օր ի, ուրենց թաքավորի խարսի՝ Զազոյի խամար ճուր կկրեն, ըսկուն որ իսկի ակա չեն իտա մեյ մեկելի:

Ասմարն ի, կտիսնա որ էտա իրիկուն Զազոն չի գյա տուն, էն մեկել օրն էլ կաչկի, մեկ օր, երկօր, իրեքյ օր, կտիսնա որ չէ՝ Զազոն չկա, պառավն էլ չկա: Ինքյ ուր կասի. չէ, իմ Զազոյի գյլեռխ մեկ ողիյեմ իկեր ի, համդա ել էսա մեր տան քյավթառ պառվու ծեռնով:

Ասմարն ի, կտիանա որ Զազոյի գյալու ճար չկա, կէլնի փըտռելու ըս դեխ, էն դեխ: Դեոր որ կէրթա՝ ճար չէլնի, զատ չէրևա, մեյ տեղե ել մեյ խատ աալախ չի կանա առնե: Կտիսնա որ ճար չկա, էն մեկ

իրիկուն կնստի կմտածի: Թիրդան միտ կինի օրթանջի տնու խապար, որ խրեղեն ծիյուց իրեքյ-չորս մազ քյաշե պոչից, դրե ուր ծոց: Խեստ որ կինի միտ, կխանի ծոցից մեյ խատ մազ, կուտա կրակ, խեստ որ կուտա կրակ՝ խրեղեն ծին կուգյա, կկայնի առաճ, կասի՝ ուզի ուզածտ:

Լաճն ի, կասի. - Զիկ տար էն աշխար, որտեղ որ Զազոն ի:

Ծին կասի. - Ես չեմ կանա չուր էտա խող էրթա, իմ ուժ չուր էսա ծովու մեչ մեյ խատ կղզի կա, ես չուր էնտեղ կանամ էրթա: Էնտեղից մենակ տավա-կուշին կանա տանե, ուրիշ մարթ չի կանա: Իմ պոչի մեյ մազն էլ էնտեղ կուտաս կրակ, տավա-կուշին կուգյա, կէլնես վեր ինոր թեերաց, քյե կտանի քզո ուզած տեղ:

Ասմարն ի, կէլնի կխեծնի էսա խրեղեն ծին, աչկեր կխտի կպանա, մեկ էլ կտիսնա, որ խասե էտա կղզին: Հխասնի էտա տեղ, մազ կուտա կրակ, տավա-կուշին կուգյա, իսոր լեզու կէլնի կասի. ի՞նչ կուզես, ուզի ուզածտ:

Ասմարն ի, կասի. - Ես կուզիմ, որ զիկ խանես էն աշխար, որտեղ որ Զազոն ի:

Տավա-կուշին ի, կասի. - Տե էլի վեր իմ թեերաց, քյե տանեմ քյո ուզած տեղ:

Լաճն ի, կէլնի վեր էսա տավա-կուշյու թեերաց, աչկեր կխտի, կպանա կտիսնա որ էլավ խողի իրես:

Լաճն ի, տավա-կուշուն կթողնի պաց, ինքյ էլ աղքյատի շոր խայնի կէլնի կինի ճամպախ, կէրթա, կէրթա կխասնի քյաղքյի մեչ: Շատ ծարավ կէլնի, իսոր-ինոր կխառնուցի, կասի. - Ըստեղ որտե՞ղ ախպյուր կա:

Վարհասլ շանց կուտան էսա լաճուն:

Ասմարն ի, կէրթա ախպյուր կկընտնի, կուզի ուր ճուր խմի, կտիսնա որ ի՞նչ. խազար-խազար վեր էտա ախպրին կպճպընճան, ճար-ճարանքյ չկա որ մեյ մարթ մե կտոր ճուր խմի:

Լաճն ի, կմոտոխասնա ախպրին, կասի. - Քյուրին, քյուրին մեյ խատ էտա փառչ տվեք՝ խմեմ, ճամփորթ մարթ իմ, նեղացուկ իմ, աստընծու սատաղեն:

Էսա ժաղամաթն ի, կթափին վեր էսա լաճուն, կասին. - Դե կնա խեղտրված խեստ քյո ճրին, խո տու էլ չանքյ մեր թաքավորի կնիկ Զազոն ավե՞լ չես:

Էսա լաճն ի, խեստ կլսի Զազոյի անուն, կասի՝ ըստեղ մեյ պան կա, տեսնանքյ խենքյ ի՞նչ կուգյա տուս: Էլ ճուր-մուր կմոռնա, կէրթա քյաղքյի մեյ ծեր, տունմ կկընոնի, տուռ կտտի պառավմ կուգյա տուռ կպանա:

Ասմարն ի, կասի. - Պարեով տատե, մընաֆընը կուզի՞ս:

Պառավ կընիյն ի, կասի. - Ասրծու պարին, - կասի, - ի՞նչի չէ, մընաֆընը որ կա՝ աստընծուն ի, պարեով խազար պարեով վեր իմ գյլխուն:

Իրիկուն որ կէլնի, էսա Ամմար, խայ-մայ կուտին, ինքյ խապար կպանա կասի. - Տափե՛, էսա ծեր քյաղաքյ ի՞նչ խապար ի, կնայի ասի մեկտոր ճիւր խմեմ, տեսա որ ճար-ճարանքյ չկեր: էն ·մեկուց ուզիցի ասի՝ մեյ խապ էտա փառչ տուր խմեմ, չի տուր: Ասայ. «Դե կնա խեղտըված, տիւ խո չանքյ մեր թաքավորի խարս Զազոն ավելի չես»: Էսա ի՞նչ Զազո յի, ի՞նչ պան ի, չես կի՞տե:

Պառավն ի, կասի. - Խա՛, կիտեմ, - կասի, - կիտես ի՞նչ էլե պալամ: Իսորից քյանիմ տարի առաճ մեր թաքավոր խապար էօրեռխկեց էսա Զազոյին որ մկա թաքավորի մոտն ի, թե՝ ես քյե կուզիմ առնիլ: Համան շատ խորոտ խուռն-խրեղեն ախչիկ ի: Էսա ախչիյն էլ խապար էօրեռխկեց ասայ, թե ես քյե պես անգյալ թաքավորին կնիկ չեմ էլնի, ես որ պսայվեմ՝ բաբազյիթի խետ կպսայվեմ: Իսոր վերեն մեր թաքավոր քյաշեց ուր ինչ կանդար որ ասքյար կեր, կնաց վեր էսա ախչկան: Ուզեց զոռով պերի, մեկ-էրկու անգամ, ճար չէլավ, չկառցավ: Քյանի որ կնաց ասքյրներ բիթիւն իտուր ճարտել, դառցավ էկավ: Իտոր վերեն թաքավորն էլ ծեռ քյաշեց ասաց, բոշ պան ի, ես չեմ կանա ինոր խետ գյլեոխ էլնե: Մի ժամանակ ըսկընա ընցավ: Ավուր մեկ ի՞նչխ կէլնի, էսա Զազոյին մեկ խապ ալնախմ կեր, որ աշխրիս մեչ անուն ուներ, ինքյ կասեր՝ վով իմ ալնախ կանա առնե, ես ինոր կէլնեմ: Վարիաալ ի՞նչխ կէլնի էսա ալնախ ծովու ափից կկընտըննեն, կպերեն կուտան թաքավորին: Թաքավորն էլ կասի. «Անպատճառ Զազոն տեռշմանե ուր արած, մկա զիկ կսիրի, էլ մարթ չի կընտե·որ ուր ալնախ էօրեռխկի զիկ, թալե ծով որ ծով առնի պերի»: Իտոր վերեն ամր կանի կասի, վո՞վ կանա էրթա Զազոն պերի: Մեյ խապ պառավ կնիկմ կասի. ես կանամ պերե: Թաքավոր կասի որ պերեր ես, ես քյե քյո կշռանքյով ոսկի կուտամ: Էսա պառավ որ վուսկու անուն կլսի, կէրթա կառնի մեյ խապ ծըծիւմ, կթալի վեր ծովուն, ինքյն էլ կէլնի կխեծնի վեր էտա ծըծըմին, կէրթա: Կէրթա չոււր կի'աջոռի՝ Զազոն կխճի մեչ էտա ծըծմին, կառնի կպիրի թաքավորին: Պերեր ին, չին պերե, չոււր մկա էտա ախչիկ կիրիցի կմրկի, կվառվի, ճար չկա: Իտոր խամար ի, որ քյաղքյի բիթիւն ժաղամաթ ուրենց տառչեր, կժեր առեր ին, կնայեր ին ճիւր կտանին որ խելքյ պերեն վերեն: Էսա ութ, տաս օր էլավ որ Զազոն կվառվի, կմրկի: Թաքավորին էլ ճար չմնաց, կանչեց ախչկան ասաց. «Քյե տըըընխինգյ օր ժամանակ, պսայվար՝ պսայվար, չպսայվար՝ քյե զոռով էլե իմ ուզած կանեմ»: Մկա մնացե իրեքյ օր որ ողտեն թըմըմի: Համան ախչիյն էլ էրթալով զաթի մրկե պռծե:

Ամմարն ի, կասի. - Տափե՛, իսկի մարթ չէրթա՞ մոտ էտա ախչիկ: Թաքավոր ի՞նչ ի արե իտոր խամար:

Պառավն ի, կասի. - Թաքավոր մենակ պառվներայն ի ամր արե որ էրթան տիսնան, բալքյի համոզեն որ պսայվի: Ջահելներաց բիս-բիթիւն չի թողնե:

Ամմարն ի, կասի. - Մկա, տափե, տու կանա՞ս էրթա:

Պառավն ի, կասի. - Խա՛, ես կանամ:

Լաճն ի, կասի. - Որ ըսկուն ի, էլի փու կնա թաքավորի մոտ, ասա. «Թաքավո՛ր ապրած կենաս, զիկ հրաման տուր, ես երթամ Զազոյի մոտ համոզիմ, չիւր իրեքյ օր թող պսայվի»:

Պառավն ի, կասի. - Ի՞նչ կէլնի, կերթամ:

Լաճն ի, կասի. - Որ կերթաս, առ էսա իմ մատի մատնիկ, տար, գյախտիկ, որ կմտնես ներս, կբաշլայես խետ խապար տալ, էսա մատնիկ տուր ինոր, ասա. «Ասմար կասի՝ խոսք տուր, չիւր իրեքյ օր թաքավորի խետ կպսայվիմ»:

Պառավն ի, կասի՝ աղեկ: Էն մեկել օր առատուն կառնի մատնիկ, կերթա թաքավորի տռան վերեն: Նազր-վազրն ի, կասի. - Ի՞նչ կուզիս, պառավ:

Պառավն ի, կասի. - Կուզիմ թաքավորին մեյ խատ տիսնամ:

Կառնեն կերթան մոտ թաքավոր:

Թաքավորն ի, որ կտիսնա էսա պառվուն, կասի. - Ի՞նչ կուզիս, պառավ:

Պառավն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, ես զատ չիմ ուզե, ես կուզիմ քյոր ջանին սաղութեն: Մենակ ես քյեզնից կուզիմ որ զիկ իզին տաս, ես երթամ մոտ Զուզոն, ինոր համոզիմ չուր իրեքյ օր պսայվի:

Թաքավորն ի, խետ քր կլսի էսա խապար, ամր կանի որ էսա պառվուն տանեն մոտ Զուզոն:

Պառավն ի, կերթաւ մոտ Զուզոն, կնստի կասի. - Զազո՛, - կասի, - խելքյ պե վերետ, քյոր Ասմարից խապար իմ պերե:

Զազոն ի, խետ որ կլսի Ասմարի անուն, աչկեր կպանա, կէլնի կնստի, կասի. - Ի՞նչ խապար ես պերե, դեռ՞ր ի:

Պառավն ի, կխանի Ասմարի մատնիկ, կուտա ախչկան, կդառնա կասի. - Ասմար զիկ ասայ, որ խոսկ տուր խետ թաքավորին պսայվել, ես քյե կազատիմ:

Զուզոն ի, խետ որ մատնիկ կտիսնա, կճանչնա, նոր էն գյախ կավատա: Կդառնա պառվուն կասի. - Աղեկ, տուն էլ էսա մատնիկ առ, տար տուր ինոր:

Պառավ կէլնի տուս, կերթա մոտ թաքավոր, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, Զազոն խոսկ տվեց, որ իրեքյ օրից սորա պսայվի:

Կասի, կդառնա կուգյա տուն, Զազոյի մատնիկն էլ կուտա Ասմարին:

Թաքավոր խետ էսա խապար կլսի, կպաշլայի խարսնսի թադարյուքյ տիսնալ: Կտիսնա որ Զուզոն էլ ֆառախացիր ի էփեջա:

Զազոն ի, որ կլսի Ասմարի գյալ, ուրախութեն ոտ գյետին չի առնե: Խելքյ իկե գյլեռխ, խորոտ-մորոտ գյեռ խարսնսի կհազրվի: Իրեքյ օրից սորա խարսնիս կբաշլայեն:

Թաքավորն ի, կկանչի ինչ կանդար որ նազր-վազր կա, ճոչ պաշտոնյա կա, բիթիւն էլ ուր խարսնիս: Խարսն ի, գյեռ կտանին ժամ, կպսակեն կպերեն որ տանեն թաքավորի քյեռշկ-սարեն:

Ասմարն ի, կէլնի կխայնի խին շորեր, մեյ խատ գյամանիմ կպոնի ուր ծեռ, կէրթա կկայնի վեր թաքավորու քյեռշկ-սարի տռան էտա խարսնսի օր: Կբաշլայի գյեռվգյ ասել, ուր գյասմանին քյաշել:

Խետ որ խարս կպերեն կխասուցեն վեր քյեռշկ-սարի տռան որ պիտի մտուցեն ներս, էսա Ասմարն ի, ծոցից կխանի էտա ծիյու մազ, կուտա կրակ: Խետ կուտա կրակ, տասվա-կուշին կուգյա կկայնի իտոր առաճ: Խետ որ կկայնի իտոր առաճ, համան ինքյ կէլնի կխեծնի, Զազոն էլ կթալի վեր թեքյերաց, հայտե բաբամ, չուր ծովու կղզին: Էնտեղն էլ մեկ մազ կուտուս կրակ, խրեղեն ծին կխասնի, իսոնք կառնի ուր վերեն, կտանի կխանի ուրենց աշխար մեկ աչկ խտուց գյախ:

Թաքավորն ուր նազր-վազրներ կինեն մեչ էտա կալեսբաղսխին, կտտրին՝ ախչիկ, ախչիկ, ախչիկ չկա, ախչիկ ուր տեղ խասե:

Ասմարն ի, Զազոյին որ կառնի կպերի, պիրելուց սորա կէրթա վեր էսուս թաքավորին կռիվ:

Էսուս թաքավոր ինչ կանդար որ ասքյար կթափըցուցի՝ ճար չէլնե: Ասմար մենակ բիթունին էլ կճարտի, թաքավորուն էլ կսպանի, ինոր երկիրն էլ կգնվթի:

Ասմարն ի, որ կէլնի էսա երկրրին տեր, մեկ օր տասլալ կուտա կանչել, կասի. « Էն ի՞նչ պառավ էր, որ Զազոյին ուր երկրից ծրծրմով իպե էսուս երկիր, էտա պառվու պես էլ խելացի չկա էսա սաղ աշխարի մեչ, վո՞վ ի էտա պառավ, թող գյա, ինչ կանդար որ պիրելուն ոսկի առես, ես ինոր երկու քյաշով ոսկի կուտամ»:

Էսա պառավ խետ որ կլսի, կէլնի ափալ-թափալ կվազի կուգյա Ասմարի մոտ, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, ես ի որ Զազոյին ծրծրմով պերի:

Ասմարն ի, կպերի ճիշտ էտա պառվու չափով մեյ խատ քյարմ կուտուս պորել, էսա պառվուն կտնի մեչ էտա քյարին, կդանա առճիճ խալել կուտա, խորոտմ եռման-եռման կլլի վեր էսուս պառվուն կանի խետ քյարի պենին հավասար, կասի՝ քյո հաղ աշխարի մեչ էսա էլ շատ ի: Մորա ամր կանի, որ էտա առճրճով քյար տանեն տրնեն վեր քյաղքյի բադրնին, որ էրթայող-գյայող տեսնա, էլ էտասկրնա պաներ չանի:

Ասմար կէլնի էտա երկրին էլ թաքավոր:

Ինոնքյ խասան ուրենց մուրատին, տեսքյ էլ խասնեք ծեր մուրատին: